



<< 15 >> 01 2014թ.

N 02/15/81-14

**<<Հետք>> թերթի լրագրող  
Գրիշա Բալասանյանին**

**Հարգելի Գրիշա Բալասանյան**

**Ի պատասխան Ձեր՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանում 2014 թվականի հունվարի 14-ին  
հաշվառված թիվ 230-14 հարցման.**

1. ՀՀ Արմավիրի մարզի միայն երեք քաղաքապետարաններում և Գեղակերտի գյուղապետարանում են առկա իրավաբանի մասնագիտությամբ համայնքային ծառայողների հաստիքներ:
2. Տեղական ինքնակառավարման մարմիններին է վերապահված որոշելու համայնքապետարանների հաստիքացուցակները և այն գործառույթները, որ պետք է իրականացնեն մասնագիտական պաշտոններ զբաղեցնող անձինք՝ համայնքային ծառայողները:
3. Ի պատասխան ՀՀ Արմավիրի մարզպետի պաշտոնանկության վերաբերյալ չդադարող խոսակցությունների՝ տեղեկացնենք, որ մարզպետի պաշտոնը հայեցողական պաշտոն է և բնականաբար թոշակի ուղարկելու մասին խոսակցությունները, մեղմ ասած, լուրջ չեն: 65 տարվա սահմանափակումը վերաբերում է միայն աշխատակազմի ղեկավարների պաշտոնին որպես քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոնի: Մարզպետը շարունակում է զբաղեցնել իրեն վստահված պաշտոնը, պաշտոնանկ չի արվել և վաղ է մտածել նրա հետագա գործունեության մասին:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ